ի ներքս ի յայրն ի մատրանն եւ այս կանոն կատարի. ՍՂ. ԿՅ. Տէր ասաց ցիս. Աւետ. Մատթ. Եւ Յսի. Քսի. ծնունդն էր այսպիս.»։ Ս. Աթոռոյս մատենադարանին ձաշոցներէն (թ. 12 և 1863) ձեռագիրներն ալ քննեցինք, կը կրկնեն միեւնոյն կանոնը եւ կը հրամանգեն նոյն օրը երթալ Հովուանոցի եկեղեցին, եւ կատարել ա՛յն կանոնը զոր չինած էր Յակոբ Տեառնեղբայրը, և ապա՛ դառնալ Բեթղեհէմի Ս. Այրը «խնկօք և մոմեղինօք»։ Գրչագիր եկեղեցական մատեանք այս հրամանգը իրարմէ ընդօրինակած են յար և նման, մինչև ԺԲ. դար, և յետոյ ալ։ Ձեռագիր ճաշոցներէ զատ մեր մատենագիրներէն ոմանք ալ կը յիշատակեն Հովուանոցի եկեղեցին։ Անանիա Շիրակացին «Երիցս երանեալ վարդապետը» (Է. դար) իր «Մեսրոպ բանից» գրուածքին մէջ (էջ 7) հետեւեալ կերպով կը յիշատակէ. «. . . խանգի գրեալ է ի սկզբան կանոնին այսպիս, թէ տօն Սրբոյ Յայտնութեան կատարի ի Յունվարի, որ է վեց ամսոյն. Ժողովին ի Հովուանոցն եւ զայս ինչ կանոն կատարեն եւ ապա ի Բեթղեհեմ եւ ի յայրին»։ Դարձեալ, Մովսէս Կաղանկայտուացի (Է. դար) իր Պատմութեան մէջ (էջ 227–28), «Անուանք Վանօրէից, որք յԵրուսաղէմ են չինեալ» խորագրով գլուխ մը ունի, ուր իբր «ականատես», Երուսաղէմի վանքերուն և եկեղեցեաց վրայ չահեկան տեղեկութիւններ կուտայ, և ի մէջ այլոց կը յիշատակէ Հովուանոցի եկեղեցին, որուն նկատմամբ իր կատարած նկարագրութիւնը՝ տեղագրական եւ պատմական տեսակէտով մեծ կարեւորութիւն ունի. իր խօսքերն են. «. . . եւ անտի յարեւելից կուսկ ըստ Յորդանանու կողմանէ երեք ասպարիզօք հեռի ի Բեթղեհեմէ. է Հովանոց (Հովուանոց), ուր երկու եկեղեցիք են, եւ պատարագ մատչի»։ Դրիգոր Տաթեւացին ալ, իր ծննդեան քարոզին մէջ կը յիշատակէ Հովուանոցը և կատարուած կանոնը. «. . . վասն այսորիկ այսօր նախ ի Հովուանոցն ընթանամք, որ է հասարակ տեղի սուրբ ժամասուանն, ուր բանաւոր հօտքն եւք ժողովեալք եւ ասեմք Սաղմոս . . . եւ ապա երթան առ Մսուրն ի յայրն ի տեղի ծնեալն. վասն զի ի յայրն ծնաւ Քրիստոս Փրկիչն, եւ ի մսուրն եդաւ, եւ հովիւքն ընթացան» (Զմրան հատոր, էջ 31–32)։